# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 9 | ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ | ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ | Տաբատ `շտաբային, ամենօրյա կանացի Երեսացու կտորը ռիպստոպ տեսակի, մուգ կանաչավուն 235գ/մ2 մակերեսային խտությամբ, 44 % բուրդ, 54 % պոլիէսթեր և 2 % լաիկրա մանրաթելերից: Աստառը՝ 90գր/մ2 բյազ տեսակի կտորից: Տաբատի արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի, արտադրվում են 42/2 մինչև 62/6 չափս-հասակի (նմուշը և չափս-հասակային սանդղակը տրամադրվում է Պատասխանատու ստորաբաժանման կողմից): Գործվածքի բաղադրությունը՝ համաձայն ԳՕՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՕՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՕՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Տաբատը կանացի կազմվածքի համար նախատեսված ձևվածքով է, կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից, կողային կարերում հավասարաչափ անցկացված է 1.8-2մմ լայնությամբ կապույտ կամ կանաչ գույնի 342 գր/մ2 խտությամբ մահուդե երիզներ: Աջ հետնամասում կտրված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | գրպան՝ կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Փողքերի ստորին հատվածը 3սմ ծալված և կարված է գաղտնակարով: Գուլֆիկը մշակվում է զարդակարված և ամրակարված շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ հատ 18մմ կոճակով: Գոտին 8 հատ կամրջակներով է, մինչև 45մմ լայնքով գոտեփոկի անցկացման համար: Պիտակավորումը: Տաբատի ներսից՝ աջ հատվածում, գոտու ներքևից ՝ կարվում է պիտակ՝ արտադրանքի չափս-հասակի (նվազագույնը 30մմ * 45մմ չափերով , գրվածքը՝ լավ տեսանելի), արտադրող կազմակերպության անվանումը, պայմանագրի կոդը, արտադրման տարեթիվը (գրվածքը՝ լավ տեսանելի) և խնամքի պիտակը՝ լվացքի, քիմմաքրման, արդուկման թույլատրելի չափանիշների գրառմամբ (գրվածքը՝ անզեն ընթեռնելի): Դիմացի հատվածում՝ վերևից կոճակի վրա պետք է կախված լինի թղթյա պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ, մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի և պարկերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ փակ, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, պայմանագրի կոդը, արտադրման ամիսը և տարեթիվը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 9 | | | |